№ 68 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 29 1903 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 29 № 68

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ»
կամ Tiflis, Rédaction «Mschak»
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 258.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Իւրի Վեսելովսկու դասախօսութիւնը. Նամակ Բաքուից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Շաբթէ-շաբաթ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Քաղաքական աշխարհում կատարվող գործերը ներկայումս առանձին հետաքրքրութիւն են յարուցանում և մենք անհրաժեշտ ենք համարում արձանագրել կարեւոր երեւոյթները։

Մակեդոնական շարժումը թելադրում է զանազան երկիւղներ և ազդում է նոյն իսկ բորսայի տրամադրութեան վրա։ Սակայն տեղի չէ ունեցել մի որ և է այնպիսի դէպք, որ թոյլ տայ ենթադրել թէ կարող է տեղի ունենալ զինուորական միջամտութիւն Թիւրքիայի գործերի մէջ եւրոպական որ և է պետութեան կողմից։ Ռուսաստանը և Աւստրիան առաջվայ պէս զգուշացնում են բոլգարներին և սերբերին այնպիսի քայլերից, որոնք կարող են առանձին յոյսեր ներշնչել մակեդոնական կոմիտէների ղեկավարների մէջ իրանց յեղափոխական գործունէութեան մէջ։ Այդ պետութիւնների հետ միասին եւրոպական և միւս պետութիւնները ամեն ջանք գործ են դնում պատերազմից խուսափելու համար և առաջարկութիւններ են անում Թիւրքիային շտապել ներգործական դեր կատարելու՝ մահմեդականներին զսպելու և մակեդոնական գաւառներում բարեփոխութիւններ մտցնելու։ Թիւրքիան ներկայումս ժողովել է Բալկանեան թերակղզու վրա 100,000 ից աւելի զօրք և շարունակում է ուժեղացնել իր զինուորական պատրաստութիւնները, որպէս զի զանազան պատահարների առաջն առնի անմիջապէս, եթէ նրանք տեղի ունենան։

Քաղաքական աշխարհը հետաքրքրված է Անգլիայի թագաւորի ճանապարհորդութեամբ։ Էդուարդ VII-ի այցելութիւնը Պորտուգալիայի թագաւորին պարզեց, որ Անգլիայի և Պորտուգալիայի մէջ կայացել է մի դաշնակցութիւն, որի բովանդակութիւնը սակայն մանրամասնօրէն դեռ յայտնի չէ։ Պորտուգալիայի հետ դաշնակցութիւնը յամենայն դէպս շատ կարեւոր է տրանսվալցիներին զսպելու համար այն դէպքում, եթէ Անգլիան խառնված լինի միջազգային ուրիշ խնդիրների մէջ և ստիպված լինի իր զօրքերը խաղացնել պատերազմական զանազան բեմերում։ Պէտք է նկատել, որ Անգլիան ներկայումս շատ եռանդուն գործունէութիւն է ցոյց տալիս նոյնպէս Բուջիստանի այն մասում, որ սահմանակից է Պարսկաստանին և աշխատում է օր առաջ ամրացնել իր դիրքը Պարսկաստանի թէ արեւելքում և թէ հարաւում։ Ինչպէս միշտ, նոյնպէս և այժմ Անգլիան աշխատում է օգտվել ամեն մի դէպքից ընդարձակելու իր նուաճումների ծաւալը և նոր գաղթավայրեր կազմելու արեւելքի զանազան ծայրերում։ Մակեդոնական դէպքերը ներկայումս նրա համար ստեղծել են յարմարութիւններ առաջ տանելու իր ծրագիրները։

Ֆրանսիան դարձրել է իր ուշադրութիւնը դէպի Ալժիր և Մարոկկոյի սահմանները, Գերմանիան շարունակում է իր խաղաղ նուաճումները Թիւրքիայում, Աւստրիան և Իտալիան հետեւում են քաղաքական եղելութիւններին, որպէս զի ձեռքից բաց չը թողնեն յարմար րոպէն իրանց շահերը առաջ տանելու համար։

Իսկ Ամերիկան որոնում է „ազատ դռներ“ իր գործարանական արդիւնքների համար աշխարհի բոլոր մասերում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՒՐԻ ՎԵՍԵԼՕՎՍԿՈՒ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

(Նամակ Մոսկվայից)

Մի քանի օր առաջ «Русскія Вѣдомости» օրաթերթում յայտարարված էր, որ տեղիս Կայսերական համալսարանում «Ռուս գրականութեան սիրողների ընկերութեան» (Общество любителей русской словесности) անդամ պ. Իւրի Վեսելովսկին մարտի 21-ին կարդալու է մի դասախօսութիւն՝ «Վաթսունական թուականները և հայ առաջադէմ ամսագիրը» (Шестидесятые годы и армянскій передовой журналъ) վերնագրով։

Ես պատկերացնում էի իմ առաջ մի դահլիճ, որ լցված պիտի լինէր տեղիս բոլոր հայ ուսանողներով ու ուսանողուհիներով անպատճառ և մանաւորապէս հայ գաղութից քիչ թէ շատ հայկական կեանքով հետաքրքրվողներով, սակայն ցաւալի իրականութիւն. գալիս է մարտի 21-ը, շտապում եմ համալսարան և ինչ եմ տեսնում։ Մի 20-ի չափ ռուս կանայք, 4—6 հոգի միայն տեղիս հայ ինտելիգենցիայից, որոնց թւումն էր և պ. Սմբատ Շահ-Ազիզ, և միմիայն 5 հայ ուսանող՝ մօտ 200 հայ ուսանողներից և ոչ մի ուսանողուհի տեղումս եղած մօտ 35—40 հոգուց։ Չէի կարող մի րոպէ հաւատալ աչքերիս, կրկին նայում եմ չուրջս, բայց դառն իրականութիւնը մնում է իրականութիւն...

Շատ և շատ անգամ է մամուլի էջերում արձանագրված մեր ներկայ ռուսահայ ուսանողների—ապագայ հայ ինտելիգենտների անտարբերութիւնը դէպի հայ կեանքը և նրա մասին այս կամ այն տեղերում եղած զանազան ուսումնասիրութիւնները. այսօր ես մենք սրտի ցաւով պիտի արձանագրենք այստեղ նոյնը։ Ի՞նչը կարող էր արգելք լինել այդ պարոններին, չէ՞ որ դասախօսութիւնը գրված էր ռուս լեզուով, որին նրանք աւելի քաջ ծանօթ են քան մայրենի լեզուին, չէ՞ որ դասախօսութիւնը կարդացվում էր նոյն համալսարանի պատերի մէջ, ուր նրանք լինում են միշտ, չէ՞ որ թէև ռուս թերթում յայտարարված էր, որ ընկերութեան նիստը դռնփակ է լինելու, բայց մանաւորապէս ասված էր, որ հայ ուսանողները կարող են լինել. վերջապէս ծով եկաւ և յետ դարձվեց՝ ոչ ոք։ Ոչ ոք չէ կարող արդարացնել իրան վերը յիշված պատճառներից և մէկով, եթէ ոչ իր մեռելային անտարբերութեամբ դէպի այն բոլորը, ինչ որ հայի մասին է։ Սրա մի փաստ կարող է լինել և նոյն համալսարանի պատերի մէջ հիմնված ուսանողական ընկերութեան «արեւելագիտական սեկցիայի» ժողովներին յաճախողների թիւը, որտեղ դարձեալ շօշափվում է հայկական կեանքը, ուր դարձեալ յաճախողների կրկնապատիկ մեծամասնութիւնը օտար ուսանողներ են, իսկ հայ ուսանողը միայն տեղ տեղ է աչքի ընկնում։

Պէտք է վերջապէս թողնել այս մեռելային անտարբերութիւնը, թէ ոչ, երբ նոյն իսկ օտարն է հետաքրքրվում հայ կեանքով. պէտք է վերջապէս օրինակ վերցնել գոնէ Եւրոպայի հայ ուսանողութեան ցոյց տուած կենսունակութիւնից։

Պ. Իւրի Վեսելովսկին իր «Վաթսունական թուականները և հայ առաջադէմ ամսագիրը» վերնագրով դասախօսութեան նիւթ վերցրել էր Ստեփաննոս Նազարեանը և նրա «Հիւսիսափայլը». ցոյց տալով, որ Ստեփաննոս Նազարեանը, իւրացնելով XIX դարու առաջին կիսի արեւմտեան Եւրոպայի առաջադէմ մտքերը՝ գիշեր ցերեկ մտածում էր իր խաւարի մէջ խարխափող ազգի կուլտուրական առաջադիմութեան մասին, և կարողանալով

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԱԲԹԷ-ՇԱԲԱԹ

Ծանօթներիցս մէկից իմանալով, որ հայ դերասանական մի խումբ գտնվում էր այժմ քաղաքումս, ես շտապեցի այցելութիւն տալ։

Մէկ ժամից աւելի քաղաքի այս և այն հիւրանոցները մտնելուց յետոյ վերջապէս կանգնեցի «Буфэтъ Елдорадо снамѣрами» հին, խոնաւ, խարխուլ շինութեան առաջ։

—Այստեղ են արդեօք հայ արտիստները, դիմեցի ես բուֆէտի առաջ կանգնած մրացի մի պարոնի, որ, ըստ երեւոյթին, Елдорадо-ի տէր տնօրէնն էր։

—Актрисъ здѣсъ нѣту, здѣсъ два чаловекъ стаитъ, что клубѣ фокусъ даютъ—պատասխանեց նա թթված դէմքով։

Սովորած լինելով գաւառներում դերասաններին ֆօկուսնիկներ անուանելուն, ես խնդրեցի բարկացած բուֆէտչիկին ցոյց տալ նրանց սենեակը։

Մտայ։

Փոքր սենեակ էր. աղքատ կահաւորված, կեղտոտ սեղանով, որի վրա թափված էին հացի փշրանքներ, իսկ լուսամուտում դրված էր սառած սամօվարը՝ մի քանի բաժակներով և ափսէներով։

Հին գորգով ծածկած տախտի վրա նստած էր մի երիտասարդ. առաջին մի քանի աֆիշաներ և գարեջրի դատարկ մի շիշ։

Մաքուր սափրած բեխերից իմացայ նրա դերասան լինելը. սենեակի մի անկիւնում, գիշերվայ շապկի մէջ, սապոնի փրփուրի մէջ կորած, լուացվում էր մի ուրիշ պարոն—աւելի տարիքով և գրեթէ սպիտակացած մազերով։

Ծանօթացանք։

—Ասացէք, խնդրեմ, երբ է լինելու ձեր առաջին ներկայացումը—դիմեցի ես։

—Երկու օրից յետոյ. այսօր ցրվում ենք աֆիշաները, պատասխանեց երիտասարդ դերասանը։

—Իսկ ինչ էք տալու։

—Երեւի, «Ուրիէլ Ակօստա»։

—Ինչպէ՞ս՝ երեւի. զարմացայ ես։

—Այսինքն տպված է «Ուրիէլ Ակօստա», բայց մենք կարող ենք ներկայացնել և մի ուրիշ պիեսա. դա կախված կը լինի այն բանից թէ՝ որքան աչող կը վաճառվեն այստեղ տոմսակները. օրինակ, եթէ լաւ սբօր ունեցանք, կը տանք «Ուրիէլ Ակօստա», իսկ եթէ քիչ տոմսակներ ծախվեն՝ կը խաղանք մի ուրիշ, աւելի թեթեւ կոմեդիա կամ նոյն իսկ կը դնենք մի քանի վոդեվիլներ։

—Իսկ աֆիշաները։

—Ի՞նչ նշանակութիւն ունի աֆիշա... չէ, դուք ինքներդ դատեցէք, արժէ՞ արդեօք մի որ և է 30—40 րուբլու համար խաղալ «Ուրիէլ Ակօստա», դրա համար անհրաժեշտ է առնուազն 300 րուբլի մուտք։ Թեթեւ մուտքի համար կան և թեթեւ պիեսներ. մանաւանդ որ մեր գաւառական քաղաքներում դժուար թէ զանազանեն «Ուրիէլ Ակօստան» «Սիրահարը սեղանի տակ» կամ «Փաստաբանի մօտ» և այլ այդ օրինակ վոդեվիլներից։ Մենք միշտ էլ յարմարվում ենք ներկայացումներ յաճախողների մտաւոր պատրաստականութեան և ճաշակի հետ։

Մինչ մենք այսպէս խօսակցում էինք, մօտեցաւ մեզ միւս դերասանը. նա երեսն սրբիչը գցած իր վզին նստեց մեզ մօտ։

Մենք ծանօթացանք։

—Ի՞նչ էք կարծում, դիմեցի ես այս տարիքաւոր դերասանին. դուք, ըստ երեւոյթին, փորձված դերասան էք, շատ ման եկած, ծանօթ մեր հասարակութեանը—ասացէք խնդրեմ, հայերը սիրո՞ւմ են թատրոն։

Նրա երեսին խաղաց մի խորամանկ ժպիտ, որից ես հասկացայ իմ տուած հարցիս ամենաքիչը՝ երեխայական լինելը։

—Այո, պատասխանեց նա, նոյն ժպիտն երեսին, հայերը սիրում են թատրոն...

—Ապա ինչու միշտ էլ հայ դերասանները գանգատվում են իրանց վիճակից և անդադար դեֆիցիտներ են ունենում։

—Հայերը սիրում են թատրոն—բայց ինչ թատրոն, ահա հարցը. հայ հարուստը, կրթվածը, հայ ինտելիգենտը սիրում է թատրոն—բայց ոչ հայկական թատրոն. նա սիրում է ռուսաց, ֆրանսիական, իտալական ներկայացումներ, նա սիրում է և այցելում ցիրկանաների օպերէտները, հրէական կուպլէտիստներին. նա սիրում է ամեն տեսակի թատրոն, ներկայացում—միայն թէ դա չը լինի հայկական։ Հայ միջակ դասակարգը—սա արդէն սիրում է հայկական թատրոն, ներկայացումներ, բայց... էժանագին ներկայացումներ, ուր առաջին կարգի տոմսը արժենար առ առաւելը մէկ րուբլի, իսկ վերջինը՝ 10—15 կոպէկ. իսկ ինչ գալիս է մեր ստորին, աղքատ դասակարգին—դա հայ թատրոնի սիրահարն է. սիրում է հայոց թատրոն, ներկայացումներ, բայց ձրի, մուֆթայ, այսպէս ասած «համրամատչելի» ներկայացումներ և, որովհետեւ ընտրեալ դասակարգը հայոց թատրոն չէ յաճախում, իսկ երկրորդների պահանջները անիրագործելի են, ուստի և մենք մեր ներկայացումներին մեծ մասամբ ունենում ենք երրորդ կարգի յաճախորդներ—իսկ, համաձայնվեցէք մեզ հետ, որ այդ կիսի յաճախորդներից դժուար թէ կարողանայ գոհ լինել հայ դերասանը, որովհետեւ այդպիսիները, բացի բուռն ծափահարութիւններից, մեզ ուրիշ ոչինչ չեն տալիս։

—Դա ճիշտ է, մէջ մտաւ երիտասարդ դերասանը, բայց մենք հաւատացած ենք, որ շուտով այդ բոլորը կը փոխվի. հայ բեմը գաւառներում մեծ ապագայ ունի։ Դուք կարդացել էք անցեալ օրվայ «Մշակում» Ալէքսանդրօպօլից գրված յօդուածը «գաւառական բեմ» վերնագրով։

—Ոչ, չեմ կարդացել։

—Ափսոս. ես այդ №-ը ուղարկեցի մեր խմբի այն անդամներին, որոնք այժմ զանազան քաղաքներում ներկայացումներ են տալիս. ուղարկեցի, որ կարդան, ոգեւորվեն, չը յուսահատվեն. արտիստը երբեք չը պէտք է յուսահատվի, թէ չէ ուզում, որ նրա տաղանդը թուլանայ նոյն իսկ ընդ միշտ մեռնի։

—Իսկ ինչն էր այդ յօդուածում ձեզ այդքան ոգեւորողը—հարցրի ես։

—Ահա պատմեմ.

Ծեր դերասանը նոյն հեգնական ժպիտով բարձրացաւ տեղից և քաշվեց դէպի լուսամուտը։

—Դուք գիտէք, երեւի, որ Ալէքսանդրօպօլում քսան հինգ հազարից աւելի հայեր են ապրում. այդտեղ «անարժան դերասանական խմբերը փոխանակ սէր առաջացնելու դէպի բեմը, առաջացրել են միայն սառնութիւն և արհամարհանք. և ահա այդ պատճառով էլ այնտեղ գաւառական կեանքը անցնում է միակերպ և զուրկ «էսթետիկական հմայքներից», չը գիտեմ, գոնէ այդպէս է ասում «Մշակի» յօդուածագիրը։ Բայց ինչ էք կարծում, ահա այս 1903 թւի մարտ ամսի չորսին, ճիշտ այն ժամանակ, երբ պ. յօդուածագիրը նստած Ալէքսանդրօպօլի պ. քաղաքագլխի հետ խօսում են դերասան Արմէնեանի խմբի գալստեան մասին, ուղիղ այդ րոպէին բացվում է դուռը և այնտեղ երեւում է... Ադամեանը... ներողութիւն՝ ինքը պ. Արմէնեանը։

—Զարմանալի զուգադիպութիւն է չէ, դարձաւ ինձ դերասանը, բայց երդվում եմ դա փաստ է. և ահա ներս է մտնում Արմէնեանը, ինչ Արմէնեան. կերպարանափոխված Ադամեանը և, միայն իրան Ադամեանին յատուկ շեշտով և լեզուով, խօսում է, այս երկու պարոնների հետ իր փայփայած գործի մասին։ Պ. քաղաքագլուխը և պ. յօդուածագիրը, ի հարկէ, սիրով ողջունում են համակրելի դերասանին և նրա ընկերների գալուստը—բայց, օգտվել յարմար դէպքից՝ Ազատարար Ալէքսանդր II կայսրի գահ բարձրանալուն պէս խնդրամատոյց է լինում մինիստրութեան՝ Մոսկվայում հրատարակելու «Հիւսիսափայլ»-ը։ Նրան աջողվում է այդ, բայց, ըստ պ. դասախօսի, Թեօրետիք Նազարեանի ամսագիրը թէև լինում է ռուսահայերի մէջ միակ ազատամիտ, առողջ դատող ամսագիր, թէև այդ ամսագրի իւրաքանչիւր յօդուածի մէջ որպէս կարմիր թել աչքի են ընկնում եւրօպական առաջադէմ մտքերը, թէև Ստեփաննոս Նազարեանը կամենում էր իր «Հիւսիսափայլ»-ով մտցնել դեռ մինչև այդ ժամանակ Եւրօպայի առաջադէմ մտքերին անծանօթ, բայց ընդունակ ու շուտ ըմբռնող հայերի մէջ այդ մտքերը և այդպիսով դարձնել հայերին միջնորդ եւրօպական կուլտուրայի ու ասիական կրկնապատիկ խաւարի մէջ մնացած ուրիշ ազգերի. թէև Ս. Նազարեանը իր «Հիւսիսափայլ»-ի հէնց առաջին համարում ասում է և ինքը համոզված էր, որ գիտութիւնը պէտք է օգտակար լինի, բայց քիչ է կարողանում տալ իր ազգին զգացմունքներից ու իր համոզմունքներից, որովհետև «Հիւսիսափայլ»-ը, ինչպէս ասում է պ. դասախօսը, դառնում է աւելի գիտական ամսագիր, քան հասարակական, որովհետև այնտեղ չէին շօշափվում և չէին վերլուծվում օրվայ չարիքը և այն հասարակական բնաւորութիւն կրող երեւոյթները, որոնք տեղի էին ունենում նոյն ժամանակներում ռուսահայերի մէջ։

Ապա պ. Վեսելովսկին թւելով Ս. Նազարեանի մի շարք հայեացքները՝ դէպի աշխարհաբար լեզուն, դէպի եկեղեցին ու կրօնական վէճերը (այդ ժամանակներում մի խումբ հայերի բողոքականութիւն ընդունելը), դէպի դպրոցական կարգերի վերափոխումը, հայ ժողովրդին ինչ միջոցով գիտութեան մօտեցնելը (գիտական-ժողովրդական գրքերի հրատարակութիւններ) ու նրան տնտեսապէս բարձրացնելը (գիւղատնտեսական գիտութիւնների տարածումը), թւում է և «Հիւսիսափայլ»-ի գլխաւոր աշխատակիցներին, պարզաբանում է իւրաքանչիւրի հայեացքներն ու աշխատութիւնները «Հիւսիսափայլ»-ում, որոնք եկել էին բաժանելու Ս. Նազարեանի վրա ընկած այն ծանր լուծը, որ ինչպէս մի արեգակնային շողք պիտի փայլեր հիւսիսից դէպի հարաւ, մտցնելով իր հետ հայ ժողովրդի մէջ ժամանակակից Եւրօպայի առաջադէմ մտքերը։ «Հիւսիսափայլ»-ի աշխատակիցներից պ. Վեսելովսկին յիշեց Մ. Նալբանդեանին, Րաֆֆիին, Սուլթան-Շահին և պ. Ս. Շահ-Ազիզին։

Այնուհետև թւելով «Հիւսիսափայլ»-ում աչքի ընկնող յօդուածները թէ թարգմանական և թէ ինքնուրոյն, պ. Վեսելովսկին ասում է, որ ռուսահայերը դեռ այն ժամանակվանից հետեւել ու թարգմանել են ռուս գրականութիւնից, ինչպէս Լերմոնտովից «Դեւը», թարգմանութիւն Սագաթեանի, տպված «Հիւսիսափայլ»-ում, Տուրգենևից, Տօլստօյից և այլն, և մինչև այսօր էլ ռուսահայերը հետեւում են ռուսական թէ գրականութեանը և թէ պարբերական մամուլին և կատարում զանազան թարգմանութիւններ՝ սկսած ամենահին և վերջացնելով ամենանոր ռուս գրողների աշխատութիւններից։ «Ապա ուրեմն, վերջացնում է պ. Վեսելովսկին իր դասախօսութիւնը, մենք ևս մօտենանք այդ ազգին, հետաքրքրվենք նրա կեանքով, ձեռք մեկնենք նրան ինչպէս եղբայրը եղբօր և այդպէս ձեռք ձեռքի տուած առաջ գնանք կուլտուրական ճանապարհով»։

Պ. դասախօսը արժանացաւ բուռն ծափահարութիւնների։

Ս. Մնջոյեան

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Մարտի 26-ին

Մարտի 23-ին, երեկոյեան, Բագուի քաղաքային խորհրդի դահլիճում կայացաւ Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը։ Ինչպէս երեւում է, ընկերութեան գործունէութեամբ հետաքրքրվողների թիւը հետզհետէ զգալի կերպով աւելանում է, և այս անգամ քաղաքային ընդարձակ դահլիճը հազիւ կարողացել էր տեղաւորել բազմաթիւ անձանց, որոնք եկել էին ժողովին ներկայ գտնվելու։ Ժողովը բացվեց ներկայութեամբ 43 անդամի, բայց նիստի ժամանակ այդ թիւը հասաւ մինչև 84-ի. բացի դրանից ներկայ էին 30-ից աւելի հիւրեր—ոչ անդամներ։

Ժողովի համար նախագահ ընտրվեց, բաց քուէարկութեամբ, պ. Լ. Ղուլեան, քարտուղար էր վարչութեան անդամ-քարտուղար Յ. Քոչարեան

Նախ քան հերթական հարցերին անցնելը, նախագահի առաջարկութեամբ, ընդհանուր ժողովը ոտքի կանգնելով յարգեց անցեալ տարիների ընթացքում ընկերութեան վախճանված մշտական անդամների յիշատակը. դրանք են՝ Յ. Ի. Ադամեան, Ա. Բ. Ղուկասեան, Իս. Իս. Ժամհարեան, Ն. Ա. Սափարեան, Բ. Ս. Դոլուխանեան։

Ապա ժողովը զբաղվեց ընկերութեան 1902 թւի գործունէութեան տարեկան տեղեկագրի քննութեամբ։ Քանի որ տպագրած հաշիւը վաղօրօք արդէն ցրված էր անդամների մէջ և ծանօթ էր նրանց, վարչութեան նախագահը և անդամները բաւականացան միմիայն հարևանցի տեղեկութիւններ տալով ժողովին վարչութեան և նրա առանձին հիմնարկութիւնների գործունէութեան մասին։ Վերստուգող յանձնաժողովի անդամները՝ պ.պ. Կ. Եաղուբեան, Հ. Տէր-Միքայէլեան և Լ. Օհանջանեան մի քանի նկատողութիւններ արին, թէ ինչ բարեփոխութիւններ ցանկալի կը լինի մտցնել ընկերութեան դրադարան-ընթերցարանի, աշխատանքի տան և ճաշարանի գործավարութեան եղանակի մէջ։ Այդ առիթով վարչութիւնը արւեց մի քանի բացատրութիւններ, որոնցից յետոյ ընդհանուր ժողովը հաստատեց տարեկան տեղեկագիրը, յարակցելով, որ վարչութիւնը ի նկատի ունենայ ժողովում արած նկատողութիւնները և որքան հնարաւոր գտնէ՝ օգտվի դրանցից, գործին աւելի աջող ընթացք տալու համար։

Դրանից յետոյ ժողովը քննեց 1902 թ. ելքի և մուտքի հաշիւը։ Կարդացվեց վերստուգող յանձնաժողովի զեկուցումը, որը գտնում էր, որ տարվայ ընթացքում ընկերութեան հաշիւները պահվում էին ամենայն կանոնաւորութեամբ և բոլոր արված ծախսերը կատարված են համաձայն արձանագրված վճիռների։ Մի քանի անդամներ նկատեցին, որ կատարված ծախսերը մի քանի յօդուածներով աւելի են քան նախահաշւով որոշած գումարը, այն ինչ միւս յօդուածներով պակաս է։ Այդ առիթով վարչութեան նախագահը բացատրեց, որ վարչութիւնը օգնել է դիմողներին այն բոլոր դէպքերում, երբ նրանց կարիքը նա համարել է ապացուցված, և չէ կարելի մեղադրել վարչութեանը նրանում, թէ ինչու աւելի չէ ծախսված, քան թէ իսկապէս եղել է պահանջը։ Վարչութիւնը օգտվել է այդ դէպքում նախկին ընդհանուր ժողովի որոշմամբ, որով թոյլ էր տրվում վարչութեանը, որոշված սահմաններում, մի ծախսը անցկացնել միւս յօդուածը, երբ դա համարվում էր անհրաժեշտ։

Այդ բացատրութիւնից յետոյ ընդհանուր ժողովը հաստատեց 1902 թւի ելքի և մուտքի հաշիւը։

Նախ քան 1903 թ. նախահաշւին անցնելը՝ նախագահը յայտնեց ժողովին, որ վարչութիւնը մինչև նախահաշիւը ընդհանուր ժողովին ներկայացնելը և նրա հաստատութիւնը ստանալը՝ ընթացիկ կարիքների համար կատարել է զանազան ծախքեր, հիմնվելով դեկտեմբերի 31-ին իր կայացրած արձանագրութեան վրա, որով որոշել է կատարել բոլոր անհրաժեշտ ընթացիկ ծախքերը և ապա ներկայացնել դրանց մասին ընդհանուր ժողովին։ Վարչութիւնը, այժմ դիմելով ընդհանուր ժողովին, խնդրում է վաւերացնել այդ ծախքերը։

Ընդհանուր ժողովը հաստատում է թէ այդ ծախքերը և թէ 1903 թւի նախահաշիւը։ Նախահաշւի հետ կապված էր այն հարցը, որը առաջարկել էր վարչութիւնը 1903 թ. պակասելիք պակասորդը լրացնելու վերաբերմամբ։ Ինչպէս յայտնի է, վերջին տարիները, չը նայած որ ընկերութեան եկամուտը հետզհետէ աւելանում է և այս տարի սպասվում է արդէն մինչև 22,000 ր., սակայն ընկերութեան կարիքները այնքան բազմացել է և մանաւանդ այնքան մեծ է ընկերութեանս դիմող կարօտեալների թիւը, որ վարչութիւնը անկարող է լինում սահմանափակվել ստացված մուտքով, և ամենայն տարի տրամադրվելի դրամագլխից վերցնում է մի որոշ գումար պակասորդը լրացնելու համար։ Այսպէս անցեալ տարի այդ դրամագլխից վերցված էր մօտ 6000 ր., իսկ այս տարի վարչութիւնը առաջարկում էր վերցնել 3744 ր. ընթացիկ ծախքերի պակասորդը լրացնելու համար։—Առիթից օգտվելով վարչութեան անդամ Պ. Ն. Արէլեանը առաջարկեց պահեստի դրամագլխից յատկացնել մի խոշոր գումար ձրի բնակարաններ կառուցանելու համար, քանի որ, նրա կարծիքով, ընկերութեան գործունէութեան ամենակարեւոր կողմը այդ խնդիրն է, և այդ ճանապարհով ընկերութիւնը կարող է աւելի շահաւէտ կերպով գործադրել իր պահեստի գումարը, քան թէ թողնելով բանկային հիմնարկութիւններում, ընթացիկ հաշւում։ Այդ առաջարկութեան դէմ առարկեցին մի քանի անդամներ, որ պահեստի դրամագլուխը պէտք է պահել անակնկալ և լուրջ դէպքերի համար, երբ հարկաւոր կը լինի ընկերութեանը լարել իր բոլոր ուժերը մի որ և է աղէտի ժամանակ ժողովրդին օգնելու համար, իսկ սովորական ժամանակ պէտք է բաւականանալ ստացված եկամուտը միայն ծախսելով։—Վարչութեան նախագահը խօսելով այդ մասին՝ յայտնեց, որ վարչութիւնը այս տարի աչքի առաջ ունի օգտվելու տրամադրելի դրամագլխից նոր շինութիւնների ծախքերի մնացորդը հոգալու համար։ Բանը նրանումն է, որ հանգուցեալ Գ. Դ. Թումայեանի ժառանգների նուիրած գումարը 30,000 ր. ինչպէս այժմ պարզ է, չի բաւականացնէ բոլոր պահանջված ծախքերի համար. թէև կազմած նախահաշւի համաձայն տան կառուցումը տրված է կապալով մօտ 26,000 ր., սակայն շինութեան ժամանակ աւելացել են մի քանի ծախքի յօդուածներ նախահաշւից դուրս, և դրա շնորհիւ ամբողջ շինութիւնը վերջացնելու համար կը պահանջվի ծախք աւելի քան նուիրած գու-

---

լաւ միտս չէ, ներկայացնում են արդեօք Արմէնեանին գրաւոր ուղերձ կարմիր պատկայի մէջ դրած, առաջարկում են, արդեօք, նրան աղ ու հաց՝ թէ այդ լինում է միայն բերանացի, սակայն այդ մի և նոյն է և ահա, լաւ լսեցէք, այդ երեքը միասին կայացնում են հետեւեալ վճիռը. 1) դնել քաղաքի բեմը աւելի հաստատ հողի վրա. այստեղ, ի միջի այլոց, չը մոռանամ ասել, որ Ալէքսանդրօպօլի բեմը շինված է փթած տախտակներից և դերասանական խմբերի համար մեծ անյարմարութիւն է ներկայացնում. ահա թէ ինչու այս կէտը մեր աչքում առանձին արժէք ունի... Հա, շարունակեմ. 2) վճռում են կազմակերպել մի մշտական թատրօնական շրջան, այսպէս ասած՝ кружокъ. 3) Արմէնեանի խորհրդով ընտրվում են տեղական կեանքի պահանջներին համապատասխանող պարբերական ներկայացումների պիեսներ, այն իսկ պատճառով, որ Ալէքսանդրօպօլում տիրում են տարբեր բարքեր։ Չորրորդ՝ քաղաքագլուխը վերաշինում է դարնանը ակմբանոցի բեմը. հինգերորդ՝ բաց են թողնում նուազ գներով տոմսեր և ահա տոմսերի այդ հեղեղը տարածվում է հասարակութեան բոլոր խաւերի մէջ և ահա, այս կէտը ամենագլխաւորն է, մանաւանդ մեզ համար, ներկայացումները դառնում են համատարած, նոյն իսկ վարակիչ և... բազմարդիւն...

Հը, ինչ կասէք սրան... հրաշալի է, չէ.—և դերասանական ոգևորութեան մէջ նա այնպէս խփեց ուսիս, որ ես քիչ մնաց բարձրագոյն գոռայի։

—Ահա ձեզ գօլօվա, չէ, ասէք, ասէք, խնդրեմ. ինչպէս է. Ես ոչինչ չեմ աւելացնում ինձնից. ասածներս գրեթէ բառացի թղթակցի խօսքերն են։

—Глупости... դարձաւ ոգևորված դերասանին, ծեր, փորձառու դերասանը—իսկ յետոյ. միւս մասը, այն «ցաւօք սրտի և այլն և այլն»—ահա այն պատմիր պարոնին.

—Ну, եղբայր, այդտեղ տարօրինակ ոչինչ չը կայ. դա մի շատ սովորական բան է, աւելացրեց երիտասարդ դերասանը—լսէք շարունակութիւնը. այդ նոյն յօդուածում մի քանի տող յետոյ յօդուածագիրը գրում է միայն հետևեալը. «Ցաւօք սրտի առաջին ներկայացումը հասոյթի կողմից ապարդիւն անցաւ... օրը ցուրտ է եղել և աթոռների շարքերը դատարկ, բայց չէ՞ որ «խումբը մինչև վերջը ներդաշնակութեամբ գլուխ է հանում գործը»։

—Ну, братъ, ты еще молокососъ-ես բեմական գործում. Ալէքսանդրօպօլի քաղաքագլուխը только морочилъ головы артистамъ, ուրիշ ոչինչ, ապա թէ ոչ, ո՞վ է տեսել, որ դերասանը ապարդիւն հասոյթով և, աչքի առաջ տեսնելով աթոռների դատարկ շարքերը, մինչև վերջը ներդաշնակութեամբ գլուխ հանէ...

Երիտասարդ դերասանը գլուխը կախեց...

Ես բարձրացայ տեղիցս։

—Մեր ներկայացման համար տոմսակ հարկաւոր չէ՞, դիմեց ինձ ծերունի և փորձված դերասանը և 8—10 տոմսակներ դրեց իմ ափի մէջ.

—Ինձ միայն մէկն է հարկաւոր—ասացի ես, ցանկանալով վերադարձնել միւսները։

—Ничего, ничего... վերցրէք բոլորը, բաժանեցէք ձեր ծանօթների մէջ։

—Իսկ փողը։

Մենք ձեզ 70% զիջում կանենք, за это ձեր ծանօթները կը լցնեն դահլիճ և մենք կազատվենք աթոռների դատարկ շարքերը տեսնելուց. և это дѣло... մենք սովոր ենք... և նա բարձրաձայն ծիծաղեց։

Խօսակցութիւնս վերջացած էր։

Ես դուրս եկայ։

Հայ դերասանների հետ մեր ունեցած խօսակցութեան թարմ տպաւորութեան տակ այն ինչ ես փնտռում էի «Մշակի» «Թատրոնական բեմ» վերնագրով յօդուածը, ինձ տուեցին նրա № 61-ը և, տեսնելով Ալէքսանդրօպօլից նամակը, իսկոյն վրա պրծայ կարդալու։

Կարդում էի և աչքերիս չէի հաւատում. Միթէ սա ճիշտ է. Նամակը սկսվում էր այսպէս.

«Տարիների ընթացքում Ալէքսանդրապօլի ս. Աստուածածին եկեղեցին մի չարիք է դարձել մեր գլխին... չը գիտենք ինչ միջոց ձեռք առնել, որ այդ տարաբախտ եկեղեցու գոյքն ու եկամուտները ազատ մնային հարստահարողներից և չը մտնէին Ստ. Տիգրանեանների և Սրապեանների գրպանները. չը գիտենք ինչպէս անել, որ այդ եկեղեցու առատ նուիրաբերութիւնները չը դառնային մասնաւոր աւազակների սեփականութիւն և արտասուքի ու ողբի հետ ընծայված կօպէկները ծառայէին իրանց իսկական նպատակին»։

Սա այլ ևս մշտական Թատրօնական բեմ ունենալու մասին զառանցանք չէ, այլ սա հայկական իրականութիւնից հանած մի կենդանի, բողոքող պատկեր էր, մի Ալէքսանդրապօլեան դրամա, ուր կան որոշ, գործող անձինք իրանց անուն ազգանուններով, իրանց տարիներ շարունակւող նողկալի գործերով։ Այստեղ կայ և արտասուք և ողբ և եկեղեցին իրանց սեփականութիւն դարձնող աւազակներ, իսկ որ ամենագլխաւորն է՝ այստեղ հանդէս է եկած եկեղեցին՝ որպէս չարիք նրանում աղօթողների համար... ինչ է այս ողբերգութեան անունը. «Կողոպտված եկեղեցու» երկրորդ հատորը չէ՞ սա։ Չը գիտենք. սակայն, երբ կարդում ենք այս յօդուածի շարունակութիւնը, Ալէքսանդրապօլում կատարւող այս դրամայի գործող անձանց թիւը տող առ տողի վրա ստուարանում է. հրապարակ են գալիս նոյն եկեղեցու անխիղճ սպասաւորները, եկեղեցու շահերը պաշտպանող (?) հարստահարիչ գողերը, թալանող երէցփոխներ և սրանք բոլորը «մէկը միւսին պաշտպան հանդիսանալով, ծածկում են իրանց կատարած գողութիւնն ու թալանը»։

Ահա ձեզ մի էջ երկար տարիների ընթացքում Ալէքսանդրապօլում կատարւող այն «էպօսից», որը իրաւամբ կարող է անուանվել «Գիւմրիադա» և, որ այդ «փոքրիկ պանաման» դեռ ևս վերջացած չէ, և որ մենք դեռ ևս առիթ կունենանք լսելու դրա շարունակութեան մասին—այդ կողմից հաւատացնում է ինքը յօդուածագիրը. «կասկած չը կայ որ եկեղեցու սպասաւորները կը շարունակեն իրանց անվայել արարքները, որովհետև այսպէս են պահանջում դրանց շահերը»—վերջացնում է իր յօդուածը պ. Գ. Մ. Որքան կուզէինք, որ այս բոլորը սուտ լինէր, մի անբաստանութիւն, մի զրպարտութիւն և սրբապղծված ու թալանված եկեղեցու սպասաւորների հետ պ. պ. Սրապեաններ և Տիգրանեաններ դուրս գային հրապարակ և համոզեցնող փաստերով ապացուցանէին մեզ, որ «արտասուքի և ողբի հետ ընծայված կօպէկների յափշտակութիւնը» ոչ այլ ինչ է, եթէ ոչ հնարովի մի զրպարտութիւն։

Ահա թէ ինչու հայկական իրականութեան մէջ օր ցերեկով կատարւող այս օրինակ եղելութիւններից յետոյ մի առանձին բաւականութիւն և մխիթարութիւն ես զգում, երբ կարդում ես, որ մի յետ ընկած Իգդիրում ապրում և գործում է մի երէցփոխ, որը իր ամբիծ և հաւատարիմ ծառայութեամբ մի որ և է երեք տարում բացի բոլոր ծախքերից յատաձգել է 1731 ռուբլու չափ մի գումար և արել է աւելի քան իր նախորդները 70 տարիների ընթացքում, որով արժանացել է հասարակութեան սրտագին շնորհակալութեանը»։

Արժէր, որ Իգդիրի այդ երէցփոխ պ. Սըմբատեանցի լուսանկարը, հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ, կախվէր մեր բոլոր եկեղեցիներում երէցփոխների մօմավաճառութեան սեղանի դիմաց։

Սրապեան և Տիգրանեաններից սովորելու նոր բան ոչինչ չը կայ մեր երէցփոխների համար, այն ինչ Սմբատեանցներից նրանք շատ բան կը սովորեն։ Ի՞նչ անենք, որ Սմբատեանները յետ ընկած Իգդիրի նման գիւղերումն են միայն երէցփոխ։

Ս. Որոտ-կէտ

մարը։ Նոյնը պէտք է ասել և պ. Լիւդվիգ Սերգէյեվի անունով կառուցվող տան մասին. նրա նուիրած 10,000 ր. նոյնպէս բոլոր ծախքերը ծածկելու համար բաւական չէ, և թէ այս դէպքում, թէ Գ. Թումայեանի անուան շինութեան առիթով մնացած ծախքերը վարչութիւնը ստիպված կը լինի իր վրա վերցնել, եթէ, ի հարկէ, նուիրատուները իրանք ցանկութիւն չը յայտնեն հոգալ և այդ ծախքերը։ Ժողովականներից ոմանք ցանկութիւն էին յայտնում, որ վարչութիւնը նորից դիմէ և խնդրէ նուիրատուներին այդ մասին, մանաւանդ որ շինութիւններն էլ կոչվելու են նրանց անունով, ուստի բնական է, որ նրանք էլ հոգան այդ ծախքերը։ Սակայն վարչութիւնը իր կողմից խնդրեց ժողովից թոյլ տալ իրան մինչև 7000 ր. ծախսել պահեստի դրամագլխից այդ շինութիւնների վրա այն դէպքում, երբ այդ անհրաժեշտ համարվի և նուիրատուները յանձն չառնեն վճարել մնացած ծախքերը։ Այդ ձևով էլ հարցը որոշվեց ընդհանուր ժողովի կողմից, որը ցանկութիւն յայտնեց, որ շինութիւնները վերջացնելուց յետոյ առաջիկայ ընդհանուր ժողովին վարչութիւնը մանրամասն հաշիւ ներկայացնէ կատարված ծախքերի մասին։

Դրանից յետոյ ընդհանուր ժողովը հաստատեց վարչութեան ներկայացրած նախահաշիւը 1903 թ. համար, թոյլ տալով ծախսել պակասորդը լրացնելու համար 3744 ր. պահեստի դրամագլխից։

Ապա ժողովը անցաւ այն հարցին թէ ինչ ձևով պէտք է յարգել Գ. Գ. Թումայեանի յիշատակը։ Վարչութեան առաջարկութեամբ ընդհանուր ժողովը միաձայն որոշեց՝ անուանել այդ շինութիւնը նրա անունով և կախել նրա պատկերը տան դահլիճում. մի և նոյն ժամանակ շնորհակալութիւն յայտնել հանգուցեալի ժառանգներին՝ նրանց արած խոշոր նուիրատւութեան համար։

Դրանից յետոյ վարչութիւնը մանրամասն զեկուցեց պ. Լ. Ա. Սերգէյեվի արած նուիրաբերութեան մասին, ներկայացրեց ժողովին նրա առանձին յայտարարութիւնը, թէ ինչ պայմաններով է նա նուիրել ընկերութեանը 10,000 ռուբլի։ Լսելով այդ յայտարարութիւնը, ընդհանուր ժողովը որոշեց ընդունել այդ նուիրաբերութիւնը յայտարարութեան մէջ յիշած պայմաններով և վարչութեան առաջարկութեամբ միաձայն ընտրեց պ. Լ. Ա. Սերգէյեվին ընկերութեան պատուաւոր անդամ։ Ժողովում յոյս յայտնվեց, որ գուցէ այդ օրինակին հետևելով, ուրիշներն էլ առաջ գան և յատուկ նուիրատւութիւններ անեն Ընկերութեանը այս կամ այն նպատակի համար։

Ընտրութիւններին անցնելուց առաջ ընդհանուր ժողովը, վարչութեան առաջարկութեամբ, որոշեց շնորհակալութիւն յայտնել այն բոլոր անձանց և հիմնարկութիւններին, որոնք 1902 թւի ընթացքում թէ նիւթական նուիրաբերութիւններով և թէ այլ կերպ աջակցութեամբ օգնել են վարչութեանը նրա գործունէութեան մէջ։

Ապա ժողովը անցաւ ընտրութիւններին։ Վարչութեան անդամներից հերթով հեռանում էին՝ Ն. Աբէլեան և Ն. Դաւթեան։ Բացի դրանից, երկու անդամ հրաժարվել էին անցեալ տարվայ ընթացքում։ Այսպիսով պէտք էր ընտրել 4 անդամ վարչութեան, 4 փոխանդամ և 3 անդամ վերստուգող յանձնաժողովի համար։ Ինչպէս սովորաբար լինում է, այս անգամ էլ կրկնվեց նոյնը. առաջարկված անուններից շատերը հրաժարվեցին. քուէարկութեան ենթարկվեցին հետևեալ անձինք. Ն. Աբէլեան, Ն. Դաւթեան, Ս. Խօջայեան, տիկ. Մ. Նաբաթեան, պ. Կ. Կրասիլնիկեան, Ն. Սունդուկեան, Եր. Բուդաղեան և Կ. Եաղուբեան։

Վարչութեան անդամներ ընտրվեցին պ.պ. Ն. Աբէլեան, տ. Մ. Նաբաթեան, պ. Եր. Բուդաղեան, չորրորդ տեղի համար հաւասար ձայներ ստացան պ.պ. Ն. Դաւթեան, Ս. Խօջայեան և Կ. Կրասիլնիկեան, որոնց վիճակով ընդունվեց վարչութեան անդամ պ. Դաւթեանը, իսկ մնացեալ երկուսը, ինչպէս և պ.պ. Ն. Սունդուկեան և Կ. Եաղուբեան համարվեցին վարչութեան փոխանդամներ։

Վերստուգող յանձնաժողովի անդամներ ընդունվեցին պ.պ. Ա. Եղեկեան, Ա. Գալստեան և Ն. Քարամեան։ Ժողովը վերջացաւ գիշերվայ ժամի 12-ին։

Ականատես

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Ներսիսեան դպրոցի նոր շինութիւն կառուցանելու հարցը այժմ մտնում է նոր շրջան։ Մտադրութիւն կայ շինութիւնը կառուցանել ոչ այն տեղերում, որոնց վրա զանազան ժամանակներ կանգ էր առել հոգաբարձութիւնը, այլ Հաւլաբարում, ուր գտնվել է այդ նպատակի համար ընդարձակ և յարմար գետին։

—

Մեզ հաղորդում են, որ առաջիկայ ամառ դէպի Անդրկովկաս ճանապարհորդութիւններ պէտք է կատարեն Ռուսաստանի մի քանի դպրոցների ուսանողներ՝ երկրի հետ ծանօթանալու և դիտողութիւններ անելու նպատակով։

—

Առաջիկայ զատկական տօներին չքաւորներին բաժանելու համար ստացանք Եալտայից, մի պարոնից մէկ ռուբլի։

—

Կառավարիչ սենատը բացատրեց, որ քաղաքային գործերով զբաղվող նահանգական ատեանը իրաւունք չունի ջնջել քաղաքային լիազօրների ժողովների վճիռները, այլ իրաւունք ունի միայն տալ իր եզրակացութիւնները նրանց վերաբերմամբ։

—

Հաղորդակցութեան ճանապարհների ինժեներ Բաստամեան, «Кавказъ» լրագրի ասելով, ներկայացրել է կովկասեան գլխաւոր իշխանութեան մի ծրագիր Քուռ գետի երկարութեամբ գետափեր շինելու վերաբերմամբ Թիֆլիսում։ Այդ նախագծով առաջարկվում է Քուռի երկու կողմերում շինել գետափեր՝ սկսած Վէրայի կամուրջից մինչև Միքայէլեան կամուրջը։ Գետափերի շինութեան գումարը, ինժեներ Բաստամեանի հաշւով, կը հասնի $1\frac{1}{2}$ միլիօն ռուբլու։

—

Մեզ հաղորդում են, որ Ներսիսեան դպրոցի վեցերորդ դասարանի աշակերտները երէկ, մարտի 28-ին, Կարսի երկաթուղիով ճանապարհ ընկան դէպի Հաղբատ-Սանահնի վանքը։ Այդ ճանապարհորդութեան ժամանակ աշակերտներին կը ղեկավարէ ուսուցիչ Լիսիցեան։

—

Մամուլի գործերի գլխաւոր վարչութեան կարգադրութեամբ՝ Ֆինլանդիայում նախազգուշութիւն է յայտնված հինգ լրագիրների նրա համար, որ նրանք փետրվարի 26-ի Բարձրագոյն հրովարտակը տպել են երրորդ երեսի վրա։

—

«Приазовскій Край» լրագրին հաղորդում են Պետերբուրգից, որ նորերումս վախճանված ինժեներ Գօլուբեվ 150,000 ռուբլի է նուիրել մի ապաստարան շինելու չքաւոր և հիւանդ գրականագէտների և արտիստների համար։

—

Ներկայումս ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը, մայրաքաղաքի լրագիրների ասելով, առանձնապէս զբաղված է պետութեան բոլոր մասերում ուսումնարանական գաղութ—ամարանոցներ հիմնելու հարցով։ Ամարանոցները պէտք է հիմնվեն միջնակարգ ուսումնարանների աշակերտների համար։ Լաւագոյնը գաղութ—ամարանոցներից համարվում է այն, որտեղ փոքր վարձով կընդունվեն չքաւոր ծնողների զաւակներ՝ ամառն անցկացնելու մի ուսուցչի կամ դաստիարակի հսկողութեան տակ։ Դպրոցական այդ նոր հիմնարկութիւնների նպատակն է յարմարութիւններ տալ միջնակարգ ուսումնարանների աշակերտներին ոչ միայն հանգստանալ ձմեռվայ պարապմունքներից յետոյ մաքուր օդի մէջ, այլ և զբաղեցնել նրանց այնպիսի պարապմունքներով, որոնք չը ծանրաբեռնելով երեխաներին, նպաստեն նրանց ֆիզիքական, մտաւոր, բարոյական և գեղագիտական զարգացման։

—

ՎԱՇԼՆՎԱՆ գիւղից (Թիֆլիսի գաւառ) մեզ գրում են. «Պ. նահանգապետից հրամայված էր գիւղի պաշտօնական անձանց ռոճիկ նշանակել և համախօսականով տեղեկութիւն տալ թէ ում որքան է նշանակված։ Այս առիթով ժողովրդից ընտրված վեց մարդ գիւղացիներին ըստ նիւթականի հինգ կարգի բաժանեցին և որոշեցին, որ առաջին դասակարգը թէ ռոճկի և թէ միւս մանր ծախքերի համար վճարէ տարեկան 3 ր. 20 կ., երկրորդ դասակարգը 3 ր., երրորդ դասակարգը 2 ր. 60 կ., չորրորդ դասակարգը 2 ր. 40 կ., իսկ հինգերորդ դասակարգը 1 ր. 50 կ.։ Ծխական ցուցակից և այս ձևով ժողոված գումարից երևում է, որ ժողովվում է տարեկան 897 ր.։ Այս գումարից տարեկան ռոճիկ պիտի ստանայ տանուտէրը 120 ր., գրագիրը 300 ր., գիւղի և շինական կառավարութեան պահապանը 120 ր., չորս գզիրը 160 ր., շինական կառավարութեան անհրաժեշտ ծախքերի համար 35 ր., նոր գնացող զինւորների համար 120 ր., և վերջապէս 150 ր. առձեռն դրամ՝ անհրաժեշտ դէպքերի համար։ Անցեալ և ներկայ հաշիւներից երևաց, որ իւրաքանչիւր աղքատ և թէ հարուստ գիւղացի այդպիսի ծախքերի համար վճարել է 5—7 ր. այն էլ անկարգ։ Գիւղացիք շատ գոհ են ներկայ գեղեցիկ կարգադրութեան մասին։ Միաձայն գանձապահ ընտրվեց պ. Յովհաննէս Զաքութեանցը իբրև նոր և հասկացող երիտասարդ. յուսով ենք, որ հին խճճված հաշիւները կուղղի, իսկ ներկան ճշտութեամբ կը պահի»։

—

ԼԱՅՊՑԻԳԻՑ մեզ գրում են. «Բեռլինի «Արևելեան լեզուների սեմինարի» նախկին դոցենտ դոկտոր Անդրէաս, որ ներկայումս Գերմանիայի ամենահեղինակաւոր պարսկագէտներից մէկն է համարվում, նորերս նշանակվել է Գիօթթինգէնի համալսարանում պարսից լեզուի և գրականութեան ուսուցչապետ։ Պարոն դոկտոր Անդրէաս, ինչպէս յայտնի է, հայկական ծագումն ունի։ Նրա հայրը Հնդկաստանի հայ գաղթականներից էր»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թէհրան, մարտի 19-ին

Դերասանուհիներ Վարդիթեր և Մարի Հրանոյշ Ֆէյէկեանները, օժանդակութեամբ իշխան-Վահրամ-բէյ Դատեանի, ցանկութեամբ Աթաբէկ-Ազամի և մասնակցութեամբ տեղացի երիտասարդ թատերասէրների, թագաւորական պալատում տուին մի ներկայացում, որին ներկայ էր Արեգակնափայլ Շահը. ներկայացրին «Տիկինը ննջում է», «Մկնիկ» և «Սիրահարը սեղանի տակ» վօդեվիլները թուրքերէն լեզուով. բոլորն էլ աջող անցան և լաւ տպաւորութիւն գործեցին Շահի վրա, որովհետև ամբողջ ժամանակը, որ տևեց $1\frac{1}{4}$ ժամ, նորին մեծութիւնը շարունակ ծիծաղում էր իր առաջնակարգ պալատական պաշտօնեաներով, որոնց մէջ էին Վազիրը-Դէարբար, Ասէֆէ-Սալթանէ, իր փեսան, Վազիրը-Հօմայուն, Շահի փոքր որդին և այլն և այլն։ Բոլոր պաշտօնեաների թիւը մօտաւորապէս 25—30 հոգի էր։ Ներկայացումից անմիջապէս յետոյ երգվեց մի խմբական երգ դարձեալ թուրքերէն լեզուով, որից յետոյ դերակատարները, ի նշան երախտագիտութեան, խորը գլուխ խոնարհելով բեմից հեռացան։

Ահա հէնց այդ միջոցին նորին մեծութիւնը բարեհաճեց ծափահարել և նրան հետևեցին բոլոր պաշտօնեաները, կանչելով նաև «բրավօ»։ Շահը հրամայեց, որ վաղը երեք գործողութիւններն էլ առանձնապէս հանվեն սինեմատոգրաֆով, նոյնպէս հանվեն բոլոր գործող անձինք միասին (խմբով)։ Նմանապէս պահանջեց որ երգի բառերը և եղանակը ձայնագրվեն։

Այդ ամենից յետոյ, երբ խաղացողները պատրաստվում էին գնալու, հրամայվեց սպասել, և մի քանի րոպէից յետոյ եկաւ յայտնի Վազիրը-Դէարբարը ձեռքին մի մեծ ծրար արտաքին գործերի մինիստրի հասցէով և յանձնեց իշխանին։ Իշխանը սեղմեց Վազիրի ձեռքը և յայտնեց խորին շնորհակալութիւն։ Վազիրը յայտնեց իշխանին, թէ Շահը չափազանց ուրախ տրամադրութեամբ է հեռացել և թէ ցանկութիւն է յայտնել, որ մօհառէմից (սուգի ամսից) վերջ, այսինքն մի ամսից յետոյ, նորից ներկայացում տրվի։

Իշխանը օրիորդներին ծանօթացրեց Վազիրի հետ, որ նոյնպէս ֆրանսերէն լեզուով յայտնեց Շահի հրամանը և ցանկութիւնը։

Ց. Մարութեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Messager d'Athènes» լրագիրը հաղորդում է, թէ յունական կառավարութիւնը այժմ այն աստիճան բարեկամաբար է տրամադրված դէպի Թիւրքիան, որ թոյլ չէ տալիս Յունաստանում ոչ մի թշնամական ցոյց Թիւրքական կառավարութեան դէմ։ Այսպէս, օրինակ, մօտ ժամանակներումս մի հրատարակչի, որ յայտարարել էր, թէ շուտով լոյս կընծայէ մի գիրք՝ լի սուլթանի քաղաքականութեան վերաբերեալ մերկացումներով, ներքին գործերի մինիստրը արգելեց խստիւ հրատարակել այդպիսի գիրք և սպառնաց հակառակ դէպքում գրաւել գիրքը վաճառումից առաջ։

—Սօֆիայի «Дневникъ» լրագրի թղթակիցը հաղորդում է Կ. Պոլսից, թէ նայելով այն տեղեկութիւններին, որոնք ստացված են մակեդոնական Վէլէս քաղաքից, այնտեղ զետեղված զօրքերի մի բատալիօն, որ բացառապէս բաղկացած է ալբանացիներից, բոլորովին անպատիժ կերպով և օր-ցերեկով կատարում է չըլսված չարագործութիւններ։ Այս պատճառով վերջին օրերի ընթացքում բօլգար քաղաքացիները չեն համարձակվում տներից դուրս գալ և բոլոր խանութները փակված են քաղաքում։ Լրագիրը յիշատակում է մի շարք զզուելի փաստեր, որոնցից մենք առաջ կը բերենք միայն մէկը, որ առանձնապէս բնորոշում է, թէ ինչպիսի զարհուրելի կարգեր են տիրում այժմ Մակեդոնիայում։ «Իրանց գազանական հակումներին յագուրդ տալու մէջ,—գրում է թղթակիցը,—ալբանացի զինւորները հասան այն տեղը, որ նրանցից կազմված մի խումբ մտաւ բօլգարական օրիորդաց ուսումնարանը և յարձակվեց ուսուցչուհիներին և փոքր ի շատէ հասակաւոր աշակերտուհիների վրա։ Դժբաղդ երեխաները փախան, իսկ ուսումնարանը փակվեց։ Մեծ պասի առաջին շաբաթվայ մէջ մի օր, երբ աշակերտուհիներն, ուսուցչուհիների ղեկավարութեամբ գնում էին եկեղեցի, փողոցում նրանք ենթարկվեցի ալբանացիների յարձակման։ Երեխաները սարսափահար փախան իրանց տները և այն օրվանից բօլգարական բոլոր ուսումնարանները փակված են։ Վէլէսի բօլգարական միտրոպօլիտը բողոքեց մակեդոնական երեք վիլայէթների գլխաւոր վերատեսուչ Խիլմի փաշային թիւրք կանոնաւոր զօրքերի մի այսպիսի վանդալականութեան, ինչպէս նաև իրան՝ միտրոպօլիտին սպանելու սպառնալիքների դէմ, բայց Խիլմի փաշան ոչ մի միջոց ձեռք չառաւ զսպելու սուլթանի զօրքերի վայրենի արարքները»։ Վերջում թղթակիցը ասում է, թէ աւելորդ չի լինի, որ Վէլէսից այնքան մօտիկ գտնվող Սալօնիկի և Ուսքիւպի օտար հիւպատոսները գոնէ մի անգամ այցելէին այդ թշուառ քաղաքը, որպէս զի անձամբ տեսնէին և համոզվէին, թէ թիւրքական կառավարութիւնը ինչպէս է ռէֆօրմներ մտցնում այն տեղերում, ուր չը կան եւրօպական պետութիւնների ներկայացուցիչներ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

27 մարտի

Կ. ՊՈԼԻՍ։ Սուլթանը գերմանական թագաժառանգին և պրինց Էյտել Ֆրիդրիխին ընծայեց մի-մի թանկագին ատրճանակ և յանձնեց այն սուրը, որ նշանակված է իբրև ընծայ Վիլհէլմ կայսրին։

ԲԵՐԼԻՆ։ Վիէննայից հաղորդում են, որ Շչերբինայի առողջութիւնը չափազանց վատացել է. ջերմը սաստկացել է. թոքերի բորբոքում է առաջացել։

Կ. ՊՈԼԻՍ։ Ադրիանապօլսի վիլայէթում, Տիրնովաչիկ գիւղաքաղաքի մօտ ընդհարում է տեղի ունեցել թիւրք զօրքերի և բօլգարական հրոսակախմբերի մէջ։ Վիրաւորված են երկու բօլգար։ Հրոսակախումբը, որ զինված էր մանլիխերօվեան հրացաններով և իր հետ ունէր դինամիտ, գերի ընկաւ։ Նրան ուղարկեցին Ադրիանապօլիս։ Բ. Դուռը մակեդոնական կօմիտէտների գործունէութիւնը դինամիտներով վերագրում է անիշխանականներին, ուստի և ուզում է դիմել միջազգային աջակցութեան՝ դինամիտի ներմուծումը արգելելու և բոլոր միջազգային գծերը պաշտպանելու համար։ Եւրօպական Թիւրքիայում գործադրված են այն անհրաժեշտ միջոցները, որոնք անվտանգ են դարձնում երկաթուղային հաղորդակցութիւնը։

ՊԵԿԻՆ։ Ռօբէրտ Գարտը ռուսահպատակ Կօնօվալօվին նշանակեց Նիւ-Ջանգի մաքսատան գործակալ։

28 մարտի

ԲԵԼԳՐԱԴ։ Աչքի առաջ ունենալով ալբանացիների մէջ տիրող խառնակութիւնը, հետևակ գունդը Նիշից ուղարկվեց դէպի հարաւ-արևելեան սահմանը, որպէս զի ուժեղացնէ այնտեղի պահեստի զօրքը և ալբանացիներին թոյլ չը տայ Սերբիա ներս մտնելու։

ՀՌՈՄ։ Միջազգային պատմագիտական համաժողովը փակվեց. հետևեալ համաժողովը կը կայանայ Բեռլինում 1900 թւականին։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Ամերիկական կառավարութեան կարծիքն այն է, որ միւս պետութիւններին չէ վերաբերում այն հարցը թէ արդեօք Ամերիկան ոսկէ դրամով կը ստանայ իր վարձատրութիւնը, թէ արծաթէ. դրա հետ միասին իւրաքանչիւր պետութեան հայեցողութեանը պէտք է թողնել այն հարցը, թէ ինչ հիմունքներով պէտք է կատարվի վարձատրութեան վճարումը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը ճանապարհորդութեան դուրս եկաւ, մինիստրութեան գործավարութիւնը յանձնելով իր օգնականին՝ Մեասօեդով-Իվանօվին։ Նորին Մեծութեան դիւանատան գլխաւոր կառավարիչ Գուդբերգը, Պետերբուրգից հեռանալով, իր պաշտօնը յանձնեց Մամօնտօվին։

ԼՕՆԴՕՆ։ Լրագիրները յայտարարում են, որ նրանք ընդհանրապէս համաձայն են Բալֆուրի արտասանած ճառի հետ՝ Բաղդադի երկաթուղու վերաբերմամբ, բայց Թախանձագին խնդրում են, որ կառավարութիւնը երաշխաւորութիւն ձեռք բերէ, որպէս զի Անգլիայի մասնակցութիւնը այդ գործում վնաս չը հասցնէ այն չափազանց դրութեանը, որ ունի Անգլիան Պարսկական ծովածոցում։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Կօլումբիայից հաղորդում են, որ Տիօխիօ գիւղը կործանվել է հրաբուխից։ 60-ից աւելի մարդիկ սպանված և վիրաւորված են։

ՊԱՐԻԶ։ Մինիստրների խորհուրդը որոշեց այն ծրագիրը, որի համեմատ Պարիզում հանդէսներ պէտք է կատարվեն Էդուարդ Թագաւորի ներկայութեան ընթացքում՝ ապրիլի 18-ից մինչև 21-ը։

ՊԵԿԻՆ։ Ամերիկայի ներկայացուցիչը յանձնեց մի նոր պարտաւորութիւն, որով որոշվում է, Թէ Չինաստանը ոսկէ դրամով պէտք է վճարէ զինուորական վարձատրութիւնը։

Կ. ՊՕԼԻՍ։ Թագաժառանգը և պրինց Էյտել Ֆրիդրիխը ճանապարհ ընկան, սուլթանին սրտագին հրաժեշտ տալով։ Սուլթանը շնորհեց Թագաժառանգին՝ Լենադանի-Ալի-Օսման տոհմական շքանշանը, իսկ պրինց Էյտել Ֆրիդրիխին՝ Իմթիազ շքանշանը։

Կ. ՊՕԼԻՍ։ Շչերբինայի առողջութիւնը անյուսալի է։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

ՋԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։

Զ. Ի. ՔԱՐԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.

Գ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երկուշ. չորեք. ուրբաթ։

Ա. Գ. ԿԱՐԱԳԵՕԶԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. ՌՕՍՏՕՄԲԵԿՕՎ—5—6 ժ. վիրաբուժ. և մորթու հ. (էլեկտրաբուժ.)։

Ն. Ս. ԼԻՒԲԵՑԿԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժ) ներքին և վեներական հ.

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԵԶԵՐՍԿԻՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։

Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ց. ԱՌՎԱՆԻՑԿԻ—ատամ. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՄԼՔԷԻ ԱՒԵՏԱՐԱՆԻ ԶԱՐԴԱՆԿԱՐՆԵՐԸ.— Խորանները, չորս Աւետարանիչները, Քրիստոսի համբարձումը.—Յիշատակարանները և Աւետարանի էջ մը, նմանահան, նոյնաչափ և նմանագոյն, Աւետարանի գրութեան 1000 ամեակի առթիւ (1902—903)։ Այս շքեղ նկարներու հրատարակութեան սկիզբը դրուած է Մլքէի վրայ համառօտ ծանօթութիւն մը. Աւետարանի մանրամասն նկարագրութիւնը, աստ անդ Թափառելու պատմութիւնը. դրուած են բոլոր յիշատակարանները և լուսանցքի մէջ նշանակուած տարբերութիւնները բաղդատուած Վուլկաթայի և Յունարէնի հետ։

ԳԻՆՆ Է ՖՐ. 15. ՌՈՒԲԼԻ 6։

Հասցէն. Imprimerie Amenienne, St. Lazare, Venise (Italie).

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ, ՎԵՆԵՏԻԿ։
3—3

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ընդունում է մանաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներին։ Քիմիկօ-միկրօսկօպիական կաբինէտ, որտեղ ընդունվում են կաթի, խորխի, մէզի և արեան անալիզներ։

Առաւօտեան 11—1 ժ.
Երեկոյեան 4—6 ժ.

Բեհբուտովսկայա փողոց № 41. տուն Արարատեանի։ Бебутовская ул. № 41. Домъ Араратова. 76—150

ԲԺԻՇԿ

Պ. Մ. ԱՖՐԻԿԵԱՆ

կազմում է խորհուրդներ տեղիս պրօֆէսօրների հետ՝ Վիէննա եկող հիւանդների համար։

Dr. Med. Paul Afrikian. Wien. VIII., Langegasse, 60, Thur 1. (շ.) 5—35

Հեռացնելով իմ որդի ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԵԱՆՑ ՅԱԿՈԲԵԱՆՑԻՆ (Բալասեանցին) իմ առևտրական գործերից, ապագայում տարաձայնութիւններ չը լինելու համար, յայտնում եմ բոլորին և նրանց, որոնց հետ ունեմ առևտրական գործեր, որ պատասխանատու չեմ իմ որդու ոչ պարտամուրհակների և ոչ էլ ստորագրութիւնների—տրված նրա և իմ անունից։

Եթէ իմ որդին ներկայացնէ նամակներ, հեռագիրներ կամ հաւատարմաթղթեր—խնդրեմ այդպիսիներին նշանակութիւն չը տալ։

Բալու Բալասեանց Յակոբեանց

Թիֆլիս, 25-ին մարտի
1903 Թւի 2—3

50,000

ծառեր փշատերև անտառի, եղևնի և չոճի, վեց վերշոկ և աւելի, տրվում են կտրելու իշխանուհի Մարիա Իօսիֆօվնա Ջավախօվայի կալուածքում։ Կալուածքը գտնվում է Անդրկովկասեան երկաթուղու Գրակալի կայարանից տասն և հինգ վերստ հեռաւորութեան վրայ։ Բացի սրանից կալուածքում կան և ուրիշ տեսակի ծառեր—չինար, կաղնի, բոխի, ճաճարի և կեչի։ Տեղեկութիւններ ստանալու համար խնդրում են դիմել իշխանուհի Ջավախօվային—Сел. Ховле, Горійскаго уѣзда, Тифлисск. губ. և Карсъ, князю Джавахову. 13—20

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ԼԷՕԻ հետևեալ աշխատութիւնները, գեղեցիկ, գոյներով տպած կազմերի մէջ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, հատ. II 2 ր. 70 կ.

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ, երկու հատոր մի կազմի մէջ, առանց ճանապարհածախսի 2 ր. 70 կ.
Ճանապարհածախսով 3 ր. 20 կ.

ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐՂՈՒԹԵԱՆ 1 ր. 20 կ.

Ստանալ կարելի է 1) Թիֆլիսում—հեղինակից, «Մշակի» խմբագրատան, և «Գուտտենբէրգ» գրավաճառանոցում (Առևտրական բանկի կողքին, Հալաբովի տան). Բագւում—«Պրոմէթէոս» ընկերութեան գրավաճառանոցում։ 2—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՕՐ. Ս. ՃԵՐՄԱԶԱՆԵԱՆ

Շարունակում է հիւանդների ընդունելութիւնը։
Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7
(Հ. Կ.) 55—105

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Բանաստեղծութիւնների,

մեծ դիրքով, մօտ 350 էջ։

Շքեղ Թղթի վրայ, հեղինակի պատկերով և փառակազմ 10 րուբլի, լաւ Թղթի վրայ 3 ր.։ Բաժանորդագրութիւնը կը փակվի յունիսին և գրքերը կը տրվեն բաժանորդների Թւով։

Թիֆլիսում դիմել—իշխ. Մարիամ Թումանեանին (Барятинская, 8) և Փ. Վարդազարեանին (Вольяминовская, 24). Բագու—ինժէներ Մխիթար Տէր-Անդրիասեանին (Т-во Андраникъ) և Արամ Նազարէթեանին (к-ра Шагиданова)։ 10—10

[illegible]

ՊԱՐՍԻՑ ԾՈՑԻ

ԶԷՅԹՈՒՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՈՒՇԻՐՈՒՄ

(Հիմնված 25 տարուց ի վեր)

Հաղորդում է մանրամասն տեղեկութիւններ Պարսից ծոցի առևտուրի մասին, ունի ներկայացուցիչներ հարաւային Պարսկաստանի նշանաւոր կենտրոններում, ընդունում է յանձնարարութիւններ, գնում եւ վաճառում է ապրանքներ, փոխադրում է Եւրոպայից Պարսկաստան եւ Պարսկաստանից Եւրոպա, դիւրամատչելի պայմաններով.—Հասցէն. Zeytoon B. G. Buchier Persian-Bulf. 83—100

Լազարեան Ճեմարանի Վարչութիւնից

ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆՑԻ ԴՐԱՄԱԳԼԽԻ 1902 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՇԻՒԸ

	% Թղթ.	Առ ձեռն դրամ.
Մ ո ւ տ ք		
Մինչև 1-ն յունվարի 1902 թ. մնում էր. . . .	84,550 րուբլի	852 րուբլի 43 կոպէկ
1903 թ. ընթացքում մուտք է եղել	4,330 րուբլի	3,398 րուբլի 35 կոպէկ
Ընդամենը.	88,850 րուբլի	4,250 րուբլի 78 կոպէկ
Ծ ա խ ք		
Գնված տոկոսաբեր Թղթերի համար վճարված է		4,193 րուբլի 77 կոպէկ
և 1901 թ. հաշիւը տպագրելու համար. 24 ր, 60 կ. ընդամենը. . .		4,218 րուբլի 37 կոպէկ
Մինչև 1-ն յունվարի 1903 թ. առ ձեռն պատրաստ կայ	88,850 րուբլի	32 րուբլի 41 կոպէկ

Ծանօթութիւն. Դրամագլուխը գտնվում է Մօսկվայի նահանգական գանձարանում և պիտի աճէ՝ 1883 Թուից սկսած՝ 125 տարվան ընթացքում, մինչև 12 միլիօն րուբլի գումարի հասնելը. այնուհետև պիտի գործադրվի նուիրատուի անուամբ դպրոցներ հիմնելու և Թոշակներ յատկացնելու համար։ 1—1

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը

յայտնում է, որ կիրակի օրը, մարտի 30-ին, ժամի 12-ին, Գանօվսկայա փողոց № 25 կայանալու է տարվայ ընդհանուր ժողովը, որովհետև մարտի 23-ին նշանակված ժողովը չը կայացաւ։

1—1 Վ. Ռօտինեան

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԼԷՕ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Առաջին հատոր

(477+VIII երես, 14 պատկերով)

Ամբողջ գործը, որ գրական-կենսագրական մի մանրամասն տեսութիւն է, բաղկացած կը լինի ԵՐԵՔ հատորից, իւրաքանչիւրը մօտ 500 երես, զարդարված ԲԱԶՄԱԹԻՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ (կը լինեն «Մշակի» աչքի ընկնող աշխատակիցների պատկերները)։

Առաջին հատորը բաղկացած է երկու մասից. I) Արծրունիների տոհմը. II) Գրիգոր Արծրունու ուսանողական տարիները (գրական գործունէութիւն մինչև «Մշակը»)։ Երկրորդ հատորը մամուլի տակ է։

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Բաժանորդագինն է երեք հատորի համար ԵՐԵՔ ՌՈՒԲԼԻ, ճանապարհածախսով ՉՈՐՍ րուբլի։ Կարելի է վճարել և մաս-մաս, այն է 2 րուբլի բաժանորդ գրվելիս, իսկ մնացածը՝ երկրորդ հատորը լոյս տեսնելուց յետոյ։

Նրանք, որոնք կամենում են ունենալ գրքերը կազմերի մէջ, վճարում են ՄԻ ՌՈՒԲԼԻ երեք կազմի համար։ Դրսի քաղաքներից կազմած օրինակներին բաժանորդ գրվողները պէտք է աւելացնեն ճանապարհածախս 20 կոպէկ՝ պօստային փաթեթի համար։

Հատորները առանձին-առանձին չեն ծախվի։ Բոլոր երեք հատորները լոյս տեսնելուց յետոյ, գինը կը բարձրացնվի։ Վերադիր վճարով բաժանորդագրութիւն չէ ընդունվում։

Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է. 1) Հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը և 2) «Գուտտենբէրգ» գրավաճառանոցում, Լօրիս-Մէլիքեան փողոց։

Օտար քաղաքացիները դիմում են. Тифлисъ, Редакція «Мшакъ»։

ԲԱԳՒՈՒՄ բաժանորդ կարելի է գրվել պ. Գրիգոր Տէր-Յովհաննիսեանի մօտ, Ա. Մատուրօվի գրասենեակում և «Պրօմէթէուս» գրավաճառանոցում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՆԱԴԵԺԴԱ"

ծովային, գետային եւ ցամաքային ապահովագրութեան, ապրանքների տեղափոխութեան եւ գոյքերը կրակից ապահովագրելու համար։

ՀԻՄՆՎԱԾ Է 1847 ԹՒԻՆ

Հիմնական դրամագլուխը . . . . . 1,650,000 րուբլի
Պահեստի դրամագլուխը . . . . . 2,664,808 »

I. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

Աւելի քան 300 գործակալութիւններ եւրոպական Ռուսաստանի, Կովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի եւ հեռաւոր Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս եւ ներկայացուցիչներ արտասահմանի գլխաւոր քաղաքներում։

Տեղափոխութիւն ամեն տեսակ բեռների եւ իրերի, որոնց ընդունելութիւնը եւ յանձնումը կատարվում է Թէ տանը եւ Թէ պահեստներում ու խանութներում։

Յանձնումն բեռների ուղարկվողների կողմից առաջարկված պայմաններով (վերադիր վճարներ ի հաշիւ ուղարկողների, դրամի փոխադրութիւն (переводъ) բեռները յանձնելու տեղը հասցնելու համար եւ այլն)։

Պահպանութիւն բեռների արտօնեալ պայմաններով ստացման տեղերում՝ ապահովագրված նրանց պահեստներում, որի համար շատ կէտերում կան ընդարձակ պահեստներ, յատկապէս բեռներ պահելու համար։

II. ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Սեփական մարդատար, ապրանքատար եւ ձգող շոգենաւեր, ծովային եւ գետային նաւեր (70 նաւ)։

Բեռնակիր եւ մարդատար նաւերի պարբերական հաղորդակցութիւն Վօլգա գետի բոլոր նաւահանգիստների մէջ, Ռիբինսկից մինչեւ Աստրախան, եւ Կասպից ծովի բոլոր նաւահանգիստների մէջ, Աստրախանից մինչեւ Պարսկաստանի ափերը։

Ամենաընդարձակ պահեստներ Նիժնիում (սիբիրական նաւամատոյցի վրայ), Աստրախանում, Բագւում եւ Կրասնովօդսկում։

Բեռները անընդհատաբար ուղարկելու համար ընկերութեան շոգենաւագնացութիւնը համաձայնութիւն է կապել երկաթուղիների հետ։ Այն ապրանքների տեղափոխութեան համար, որոնք ուղարկվում են Ռուսաստանից Պարսկաստան եւ Պարսկաստանից Ռուսաստան, գոյութիւն ունի առանձին, բացառիկ արտօնութիւններով, համաձայնութիւն Պարսկական ապահովագրական եւ տեղափոխութեան ընկերութեան հետ։

III. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ։

ա) Ապահովագրութիւն բեռների, որոնք տեղափոխվում են Թէ ցամաքային և Թէ ջրային ճանապարհներով (ծովերով և գետերով)։

բ) Ապահովագրութիւն կրակից ամեն տեսակ գոյքերի։

գ) Ապահովագրութիւն ամեն տեսակ դժբաղդ դէպքերից ճանապարհին ամեն տեսակ նաւերի, շոգենաւերի, տարանտասների, վագօնների և վագօն-ցիստերնների։

դ) Ապահովագրութիւն Թանգագին իրերի և արժէքաւոր Թղթերի, որոնք ուղարկվում են պօստով, ցամաքային և ծովային ճանապարհներով, համաշխարհային պօստային դաշնակցութեան բոլոր կէտերի մէջ։

Ապահովագրութիւններ ընդունվում են ինչպէս վարչութեան, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան բոլոր գործակալութիւնների մէջ։

Բացի տեղափոխութեան պարապող գործակալութիւններից, կրակից ապահովագրելու գործերով մասնաւորապէս զբաղվում են էլի ուրիշ 350 գործակալութիւններ։

Ս. Պետերբուրգի «Նադեժդա» ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Ադմիրալտէյսկի պրօսպէկտի վրայ, № 10-րորդ տանը։

Լիազօրներ—ծովային շոգենաւագնացութեան համար՝ Բագւում, գետային շոգենաւագնացութեան համար՝ Նիժնի-Նօվգորօդում։

Թիֆլիսի գործակալութիւնը—Դվորցովայա փողոցի վրայ, վրաց ազնուականների տանը։ Տելեֆօն № 108
(Ե. Ա. Կ.) 55—120

Дозволено Цензурою. Тифлисъ, 28 Марта 1903 г.

Электропечатная Груз. Изд. Т—ва, В.-Ванкская ул.